

**«ՍԻԹԻ ՕՖ ՍՄԱՅԼ»
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ**

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայկական դրամով

31 դեկտեմբեր 2022թ.

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	6
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	7
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	8
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	9

26.06.2023

N 022313

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

«Քեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ
Գլխավոր տնօրեն

Վ. Գևորգյան

Առողջապահական ծառայությունների իրականացման
լիցենզիա թիվ 054՝ տրված 22 ֆինանսների
և էկոնոմիկայի նախարարության կողմից

ԱՆԿԱՆ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Միթի օֆ սմայլ» բարեգործական հիմնադրամի
Հոգաբարձուների խորհրդի անդամներին

Կարծիք

Մեր կողմից իրականացվել է «Միթի օֆ սմայլ» բարեգործական հիմնադրամի (Հիմնադրամ) ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, որոնք ներառում են 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղականությունները:

Մեր կարծիքով ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով արժանահավատ են և տալիս են ճշմարիտ ու իրական պատկերը 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամի ֆինանսական վիճակի, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական արդյունքների և դրամական միջոցների հոսքերի մասին՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների Միջազգային ստանդարտների:

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների միջազգային դաշնության պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրի (ՀՄԴ-ի Վարքագիրք) և Հայաստանի Հանրապետությունում կիրառելի՝ ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ վարքագծի պահանջների, և մենք կատարել ենք վարքագծի նկատմամբ մեր մյուս պարտականությունները՝ այդ պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Այլ հանգամանք

Հիմնադրամի 2021թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունները աուդիտի են ենթարկվել այլ աուդիտորի կողմից, որը 2022թ-ի ապրիլի 22-ին տրված եզրակացությամբ արտահայտել է չձևավորված կարծիք:

Ղեկավարության և կառավարման օղակներում ներգրավված անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Հիմնադրամի ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՄ-երի համապատասխան ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել ֆինանսական հաշվետվություններ, որոնք գերծ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս, ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի՝ անընդհատ գործելու հնարավորությունը գնահատելու, անընդհատ գործելուն առնչվող հարցերը բացահայտելու, ինչպես նաև գործունեության անընդհատության ենթադրության վրա հիմնված հաշվառում վարելու համար, քանի դեռ ղեկավարությունը չի նախատեսում լուծարել Հիմնադրամը կամ դադարեցնել դրա գործունեությունը կամ չունի իրատեսական այլընտրանք, բացի նշվածները:

Կառավարման օղակներում ներգրավված անձինք պատասխանատու են Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների կազմման գործընթացը վերահսկելու համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ երաշխիքներ՝ խարդախությունների կամ սխալների հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումներից գերծ լինելու վերաբերյալ, ինչպես նաև ներկայացնել աուդիտորի եզրակացություն, որը կներառի մեր կարծիքը: Ողջամիտ հավաստիացումը բարձր աստիճանի հավաստիացում է, սակայն այն երաշխիք չի հանդիսանում, որ ԱՄՄ համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումներ, երբ այդպիսիք կան: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, եթե ակնկալվում է, որ դրանք առանձին-առանձին կամ միասին վերցրած կարող են ազդել այս ֆինանսական հաշվետվությունների օգտագործողների՝ դրանց հիման վրա կայացրած տնտեսական որոշումների վրա:

ԱՄՄ-ների համապատասխան իրականացվող աուդիտի շրջանակներում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն ամբողջ աուդիտի ընթացքում: Բացի այդ, մենք.

- Բացահայտում և գնահատում ենք ֆինանսական հաշվետվություններում խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք այդ ռիսկերին ուղղված աուդիտորական ընթացակարգեր և ձեռք ենք բերում բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար: Խարդախության արդյունք հանդիսացող էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի մեծ է, քան սխալի հետևանքով առաջացած խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, փաստաթղթերի կեղծում, միտումնավոր բացթողումներ, կեղծ հայտարարությունների տրամադրում կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:

- Պատկերացում ենք կազմում աուդիտին առնչվող ներքին վերահսկողության վերաբերյալ, որպեսզի մշակենք համապատասխան ուղիտորական ընթացակարգեր, բայց ոչ Հիմնադրամի ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության պատշաճությունը, ինչպես նաև ղեկավարության կատարած հաշվապահական գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և ձեռք բերված աուդիտորական ապացույցների հիման վրա հետևություն ենք անում, թե արդյոք առկա է իրադարձությունների կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը ակրող է էական կասկած առաջացնել Հիմնադրամի անընդհատ գործելու հնարավորության վերաբերյալ: Եթե մենք գալիս ենք եզրահանգման, որ գոյություն ունի էական անորոշություն, մենք պետք է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրենք ֆինանսական հաշվետվություններում համապատասխան բացահայտումներին, կամ եթե նման բացահայտումները պատշաճ կերպով ներկայացված չեն, մենք պետք է ձևափոխենք կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա իրադարձությունները կամ հանգամանքները կարող են հանգեցնել նրան, որ Հիմնադրամը կորցնի իր անընդհատ գործելու կարողությունը:
- Գնահատում ենք ընդհանուր առմամբ ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները և արդյոք ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են դրանց հիմքում ընկած գործարքներն ու իրադարձությունները այն ձևով, որն ապահովում է ճշմարիտ ներկայացումը:

Այլ հարցերի հետ մեկտեղ, մենք հաղորդակցվում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց հետ աուդիտի պլանավորած շրջանակների և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված էական թերացումների վերաբերյալ, որոնք ներառում են աուդիտի ընթացքում մեր կողմից բացահայտված ներքին վերահսկողության կարևոր թերությունները:

Աուդիտոր

Մ. Հովսեփյան



26.06.2023թ.

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

		(հազար դրամ)	
		2022թ.	2021թ.
ԱԿՏԻՎՆԵՐ			
<i>Ոչ ընթացիկ ակտիվներ</i>			
Հիմնական միջոցներ	4	4,250	1,252
<i>Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ</i>		<u>4,250</u>	<u>1,252</u>
<i>Ընթացիկ ակտիվներ</i>			
Պաշարներ		138	306
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր		731	143
Բանկային ավանդներ	5	420,529	256,340
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	6	11,684	46,663
<i>Ընդամենը ընթացիկ ակտիվներ</i>		<u>433,082</u>	<u>303,452</u>
ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ		<u>437,332</u>	<u>304,704</u>
ՍԵՓԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ			
Կուտակված շահույթ		8,975	4,225
<i>Ընդամենը սեփական միջոցներ</i>		<u>8,975</u>	<u>4,225</u>
<i>Ոչ ընթացիկ պարտավորություններ</i>			
Ակտիվներին վերաբերող շնորհներ	7	4,250	1,252
<i>Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ</i>		<u>4,250</u>	<u>1,252</u>
<i>Ընթացիկ պարտավորություններ</i>			
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	8	44,399	25,431
Եկամուտներին վերաբերող շնորհներ	9	377,372	272,806
Կրեդիտորական պարտք շահութահարկի գծով		2,336	990
<i>Ընդամենը ընթացիկ պարտավորություններ</i>		<u>424,107</u>	<u>299,227</u>
ԸՆԴԱՄԵՆԸ ՍԵՓԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		<u>437,332</u>	<u>304,704</u>



Էսթեր Ղևորճյան

Տնօրեն

Լիլիթ Մարգարյան

Գլխավոր հաշվապահ

26.06.2023թ.

ՇԱՀՈՒՅԹԻ ԿԱՄ ՎՆԱՍԻ ԵՎ ԱՅԼ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

(հազար դրամ)

	Ծանոթագրություն	2022թ.	2021թ.
Հասույթ		5,264	6,217
Ինքնարժեք		(317)	(716)
Համախառն շահույթ		4,947	5,501
Շնորհներից եկամուտ	10	337,383	304,964
Այլ եկամուտ		-	40
Ծրագրային ծախսեր շահառուների գծով	11	(282,592)	(224,583)
Աշխատակիցներին հատուցումներ		(40,291)	(76,839)
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր		(2,135)	(3,352)
Աուդիտորական և խորհրդատվական ծախսեր		(3,600)	(4,852)
Մարկետինգի և գովազդի ծախսեր		(2,033)	(892)
Բանկային և ապահովագրական ծախսեր		(470)	(540)
Մաշվածություն		(367)	(376)
Փոստի և հեռահաղորդակցության ծախսեր		(186)	(109)
Գրասենյակային և կոմունալ ծախսեր		(602)	(308)
Այլ ծախսեր		(16,377)	(6,318)
Տոկոսային եկամուտ		21,639	13,236
Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից զուտ օգուտ (կորուստ)		(8,229)	(298)
Շահույթ մինչև հարկումը		7,087	5,274
Շահութահարկի գծով ծախս		(2,337)	(1,049)
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք		4,750	4,225

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	(հազար դրամ)	
	2022թ.	2021թ.
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր	4,750	4,225
Ժամանակաշրջանի շահույթ		
Ճշգրտումներ		
Մաշվածություն	367	376
Ֆինանսական եկամուտ	(21,639)	(13,236)
Պահուստների փոփոխություն	(40)	1,106
Փոխարժեքային տարբերությունից զուտ օգուտ	8,229	297
Դրամական միջոցների հոսքեր մինչև շրջանառու կապիտալի փոփոխությունները	(8,333)	(7,232)
Դեբիտորական պարտքերի (աճ)/ նվազում	(588)	59
Կրեդիտորական պարտքերի (նվազում)/աճ	19,008	1,193
Եկամուտների վերաբերող շնորհի (նվազում)/աճ	99,830	76,396
Գործառնական գործունեությունից զուտ դրամական միջոցներ	109,917	70,416
Ստացված դրամաշնորհներ հիմնական միջոցների գծով	2,998	-
Հիմնական միջոցների ջեռքերման դիմաց վճարումներ	(3,365)	(1,080)
Կարճաժամկետ ավանդներ ներգրավում/մարում	(164,189)	(80,000)
Ստացված տոկոսներ	21,625	13,2536
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր	(142,931)	(67,844)
Դրամական միջոցների զուտ հոսքեր	(33,014)	2,572
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների	(1,965)	(450)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբում	46,663	44,541
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջում	11,684	46,663

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

1 ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

«Սիթի օֆ սմայլ» բարեգործական հիմնադրամը (այսուհետ՝ Հիմնադրամ) հիմնադիրների կամավոր գույքային վճարի հիման վրա ստեղծված և անդամություն չունեցող, շահույթ ստանալու նպատակ չհետապնդող ոչ առևտրային կազմակերպություն է, որը գործում է՝ համաձայն ՀՀ Սահմանադրության, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի, «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի և այլ իրավական ակտերի:

Հիմնադրամը գրանցվել է ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կենտրոնական մարմնի կողմից 2014թ. դեկտեմբերի 3-ին, գրանցման համարը՝ 222.160.837674 է, գործունեության հիմնական նպատակն է.

Քաղցկեղով հիվանդների համար ժամանակակից և անվճար բուժօգնության ապահովումը Հայաստանում:

Հիմնադրամի ղեկավար մարմինը բաղկացած է՝ հոգաբարձուների խորհուրդից և տնօրենից:

Խորհուրդը բաղկացած է 12 (տասներկու) անդամներից:

Հիմնադրամը գործում է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում և չունի մասնաճյուղեր: Գտնվելու վայրն (փոստային հասցեն) է ՀՀ, ք. Երևան, Ներսիսյան 7, 212 սենյակ:

Աշխատակիցների միջին թվաքանակը 2022թ կազմել է՝ 4 (2021թ.-ին՝ 4 մարդ)

Հայաստանի գործարար միջավայրը

Հիմնադրամն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանում: Հետևաբար, Հիմնադրամի գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկաները, որոնց բնորոշ են զարգացող շուկայի հատկանիշներ: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակում են զարգանալ, սակայն ենթակա են տարբեր մեկնաբանությունների և հաճախակի փոփոխությունների, ինչը, այլ իրավական ու ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ, լրացուցիչ բարդություններ է ստեղծում Հայաստանում գործող կազմակերպությունների համար: Ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Հիմնադրամի գնահատականն Հիմնադրամի գործունեության և ֆինանսական վիճակի վրա գործարար միջավայրի ազդեցության վերաբերյալ: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

2. ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

Համապատասխանության մասին հայտարարություն

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների ("ՖՀՄՍ") պահանջների համաձայն:

Չափման հիմունքները

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են պատմական արժեքի սկզբունքի հիման վրա:

Գործառնական և ներկայացման արժույթ

Հիմնադրամի գործառնական արժույթն է հանդիսանում ՀՀ դրամը (դրամ), որը, լինելով Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը, արտացոլում է Հայաստանի երեխաների առողջության հիմնադրամի գործունեության հիմքում ընկած իրադարձությունների և հանգամանքների տնտեսական էությունը:

Դրամը հանդիսանում է նաև սույն ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը: Ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ:

Գնահատումների և դատողությունների օգտագործում

Այս ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ-ի պահանջներին համապատասխան պատրաստելու համար ղեկավարությունը կատարել է մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամտի և ծախսի ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումները և համապատասխան ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում՝ որում վերանայվել են և այն ապագա ժամանակաշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

Գործունեության անընդհատությունը

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են՝ հիմնվելով գործունեության անընդհատության սկզբունքի վրա, որը ենթադրում է ակտիվների իրացում և պարտավորությունների մարում սովորական գործունեության ընթացքում:

3. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Պատրաստման հիմունքներ

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են սկզբնական արժեքի հիման վրա, բացառությամբ ներքոնշյալից: Սկզբնական արժեքը սովորաբար հիմնված է ապրանքների և ծառայությունների դիմաց տրված հատուցման իրական արժեքի վրա:

Գործառնական և ներկայացման արժույթ

Հիմնադրամի գործառնական արժույթը սահմանվում է որպես տնտեսական միջավայրում գործող արժույթ, որում Հիմնադրամն իրականացնում է իր գործունեությունը: Հիմնադրամի գործառնական արժույթը ՀՀ դրամն է (ՀՀ դրամ):

Նոր և փոփոխված ստանդարտների որդեգրում

Սույն ֆինանսական հաշվետվություններին հաստատման օրվա դրությամբ լույս են տեսել մի շարք նոր ստանդարտներ, գործող ստանդարտների վերաբերյալ փոփոխություններ և մեկնաբանություններ, որոնք դեռևս ուժի մեջ չեն մտել:

Հիմնադրամը վաղաժամկետ չի քննդրել այդ ստանդարտներից և մեկնաբանություններից որևէ մեկը: Ղեկավարությունը կանխատեսում է, որ կիրառելի նոր ստանդարտներն ու մեկնաբանությունները կընդունվեն Հիմնադրամի կողմից՝ դրանց ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող առաջիկա ժամանակաշրջանում:

Ղեկավարության կանխատեսմամբ այս փոփոխությունները էական ազդեցություն չեն ունենա Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների վրա և ներկայացված են ստորև:

- Ֆինանսական հաշվետվությունների հայեցակարգային հիմունքներին հղումներ (ՖՀՄՄ 3-ի փոփոխություններ)
- ՖՀՄՄ 17 «Ապահովագրության պայմանագրեր» և ՖՀՄՄ 17 «Ապահովագրության պայմանագրեր» փոփոխություններ
- Հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտում (ՀՀՄՄ 1-ի և ՖՀՄՄ վերաբերյալ գործնական առաջարկներ 2-ի փոփոխություններ:

Շնորհներ և նվիրատվություններ

Պետական շնորհները Հիմնադրամին ռեսուրսների փոխանցման տեսքով պետության (պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու միջազգային կազմակերպությունների) կողմից տրամադրվող օգնություն են՝ Հիմնադրամի գործառնական գործունեությանը վերաբերող որոշակի պայմաններին անցյալում կամ ապագայում համապատասխանության դիմաց: Այլ մասնավոր, ոչ պետական հաստատություններից, բարեգործական կազմակերպություններից ստացված շնորհները համանմանության սկզբունքով հաշվառվում են ինչպես պետական շնորհները:

Շնորհները չեն ճանաչվում, քանի դեռ չկա հիմնավորված երաշխիք, որ Հիմնադրամը կատարելու է դրանց կից բոլոր պայմանները, և որ շնորհները ստացվելու են:

Ակտիվներին վերաբերող շնորհներ

Ակտիվներին վերաբերող շնորհները նրանք են, որոնց հիմնական պայմանն այն է, որ Հիմնադրամը գնի, կառուցի կամ այլ կերպ ձեռք բերի ոչ ընթացիկ ակտիվներ: Դրանք ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես հետաձգված եկամուտ ոչ ընթացիկ պարտավորությունների կազմում և սխտեմատիկ հիմունքով ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:

Ոչ դրամային ակտիվի ձևով ստացված շնորհները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում են անվանական արժեքով, իսկ նման արժեքի բացակայության դեպքում՝ գնահատված իրական արժեքով և սխտեմատիկ հիմունքով ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում կամ այդ ակտիվի սպառումից առաջացող օգուտներին գուզրնթաց:

Եկամուտներին վերաբերող շնորհներ

Շնորհները, որոնք չեն դասակարգվում որպես ակտիվներին վերաբերող, համարվում են եկամուտներին վերաբերող: Դրանք ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ որպես այլ եկամուտ սխտեմատիկ հիմունքով այն ժամանակաշրջանների ընթացքում, երբ Հիմնադրամը որպես ծախս է ճանաչում դրանց համապատասխան ծախսումները:

Շահութահարկ

Ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների համար շահութահարկի գծով ընթացիկ հարկերը, դրանց չվճարված մասի չափով, ճանաչվում են որպես պարտավորություն: Եթե ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների համար արդեն վճարված գումարը գերազանցում է այդ ժամանակաշրջանների համար վճարման ենթակա գումարը, ապա գերազանցող մասը ճանաչվում է որպես ակտիվ:

Ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների համար ընթացիկ հարկային պարտավորությունները (ակտիվները) չափվում են այն գումարով, որն ակնկալվում է, որ կվճարվի բյուջե (կփոխհատուցվի բյուջեից)՝ կիրառելով հարկերի դրույքները (և հարկային օրենքները), որոնք ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ:

Հիմնադրամն ընթացիկ հարկային ակտիվները և ընթացիկ հարկային պարտավորությունները հաշվանցում է այն և միայն այն դեպքում, եթե՝

- ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք,
- մտադիր է՝ կամ հաշվարկն իրականացնել (ակտիվը կամ պարտավորությունը մարել) գուտ հիմունքով, կամ իրացնել ակտիվը և մարել պարտավորությունը միաժամանակ:

Հիմնադրամի եկամուտների գերակշիռ մասն անհատույց ստացված ակտիվներ են, որոնք շահութահարկով հարկվող չեն, իսկ դրանց հաշվին կամ գծով կատարված ծախսերը նվազեցման ենթակա չեն: Այդ և այլ նկատառումներով ընթացիկ և նախորդ տարիներին Հիմնադրամի կողմից հետաձգված հարկեր չեն ճանաչվել:

Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցի միավորի սկզբնական արժեքը ճանաչվում է որպես ակտիվ այն և միայն այն դեպքում, երբ հավանական է, որ այդ միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները կհոսեն դեպի Հիմնադրամ, և միավորի սկզբնական արժեքը կարող է արժանահավատորեն չափվել: Հիմնական միջոցի միավորը որպես ակտիվ ճանաչելուց հետո հաշվառվում է իր սկզբնական արժեքով (ինքնարժեքով)՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է գնման գինը, ներառյալ՝ ներկրման տուրքերը և չփոխհատուցվող հարկերը, հանած առևտրային գեղչերը և արտոնությունները, ակտիվը համապատասխան վայր հասցնելու և ղեկավարության նախանշած նպատակներով օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ ուղղակիորեն կապված ցանկացած ծախսումները: Հիմնական միջոցի միավորի հաշվեկշռային արժեքում ծախսումների ճանաչումը դադարեցվում է, երբ միավորը գտնվում է այն վայրում և վիճակում, որն անհրաժեշտ է, որպեսզի այն հնարավոր լինի օգտագործել ղեկավարության նախանշած նպատակներով:

Սկզբնական արժեքը ներառում է մասնագիտական վճարները, իսկ որակավորվող ակտիվի դեպքում՝ նաև կապիտալացման ենթակա փոխառության ծախսումները: Այս ակտիվների մաշվածությունը ևս հաշվարկվում է, երբ դրանք դառնում են պատրաստ իրենց նպատակային նշանակությամբ օգտագործելու համար:

Հիմնական միջոցի միավորի օտարումից կամ դուրսգրումից առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է որպես ակտիվի իրացումից գուտ մուտքերի (եթե առկա են) և հաշվեկշռային արժեքի տարբերություն: Հիմնական միջոցի միավորի ապաճանաչումից առաջացող օգուտը կամ կորուստը ներառվում է շահույթում կամ վնասում, երբ միավորն ապաճանաչվում է:

Հիմնական միջոցի առանձին հաշվառվող միավորի բաղկացուցչի փոխարինման ծախսումները, որոնք հաշվառվում են որպես առանձին ակտիվ, ճանաչվում է հաշվեկշռային արժեքում, երբ այդ ծախսումները կատարվում են, և եթե բավարարվում են ճանաչման չափանիշները: Այդ փոխարինված մասերի հաշվեկշռային արժեքն ապաճանաչվում է: Պահպանման և ընթացիկ

սպասարկման, վերանորոգման ծախսումները ճանաչվում են շահույթում կամ վնասում կատարվելու ժամանակաշրջանում:

Ժամանակաշրջանի մաշվածության գումարը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով հաշվարկի գծային մեթոդը հիմնական միջոցի գնահատված օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Ակտիվի մաշվածությունը սկսում է հաշվարկվել, երբ այն մատչելի է օգտագործման համար, այսինքն, երբ այն գտնվում է այնպիսի վայրում և վիճակում, որն անհրաժեշտ է դեկավարության նախանշած նպատակով այն օգտագործելու համար: Ակտիվի մաշվածության հաշվարկումը դադարում է ակտիվի՝ ՖՀՄՍ 5-ի համաձայն որպես վաճառքի համար պահվող դասակարգվելու կամ որպես վաճառքի համար պահվող դասակարգված օտարման խմբում ներառվելու և ակտիվն ապաճանաչելու ամսաթվերից ամենավաղով: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանց մաշվածությունը հաշվարկվում է առանձին:

Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

- | | |
|---------------------------------------|----------|
| • Համակարգչային տեխնիկա արքավորումներ | 1 տարի |
| • Այլ հիմնական միջոցներ | 5-8 տարի |

Արտարժույթային գործարքներ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Հիմնադրամի համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ ՀՀ Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված փոխարժեքը: Ոչ դրամային հոդվածները, որոնց սկզբնական արժեքը հաշվառվում է արտարժույթով, չեն վերահաշվարկվում:

Արտարժույթային գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում:

Ֆինանսական գործիքներ

Սկզբնական ճանաչումը և չափումը

Հիմնադրամը ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունն իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչում է այն և միայն այն դեպքում, երբ այն դառնում է գործիքի պայմանագրային կողմ: Ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը սկզբնական ճանաչման պահին չափվում է իրական արժեքով՝ գումարած, այն դեպքում, երբ դա «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվ կամ ֆինանսական պարտավորություն չէ, գործարքի հետ կապված այն ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը:

Սկզբնական ճանաչման պահին անտոկոս կամ շուկայականից ցածր տոկոսով տրամադրած կամ ստացած փոխառությունները, երկարաժամկետ դեբիտորական կամ կրեդիտորական պարտքերը չափվում են ոչ թե անվանական արժեքով, ոչ թե այդ պահին տրված կամ ստացված հատուցման չափով, այլ իրական արժեքով, որը որոշվում է դրանց գծով պայմանագրային ապագա դրամական հոսքերը գեղջելով՝ կիրառելով համապատասխան ժամկետայնության և ռիսկայնության գործիքների համար գերակշռող շուկայական տոկոսադրույքները: Սկզբնական չափման համար որոշված իրական արժեքի և տրված կամ ստացված հատուցման միջև տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ, երբ դա պետական շնորհի մաս է կազմում, որի դեպքում

կիրառվում են «Պետական շնորհների հաշվառում և պետական օգնության բացահայտում» ՀՀՄՄ 20-ով սահմանված մոտեցումները:

Ապաճանաչումը

Հիմնադրամն ապաճանաչում է ֆինանսական ակտիվն այն և միայն այն դեպքում, երբ՝

1. ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը (լրանում է ուժի մեջ լինելու ժամկետը), կամ
2. այն փոխանցում է ֆինանսական ակտիվը, և փոխանցումը ստորև շարադրվածին համապատասխան որակվում է որպես ապաճանաչման պայմանները բավարարող:

Ֆինանսական պարտավորությունը (կամ ֆինանսական պարտավորության մի մասը) ապաճանաչվում է այն և միայն այն դեպքում, երբ այն մարվում է, այսինքն, երբ պայմանագրում նշված պարտականությունը կատարվում է կամ չեղյալ է համարվում, կամ ուժի մեջ լինելու ժամկետը լրանում է:

Գոյություն ունեցող փոխառուի և փոխատուի միջև նշանակալիորեն տարբերվող պայմաններով պարտքային գործիքների փոխանակումը պետք է հաշվառվի որպես սկզբնական ֆինանսական պարտավորության մարում և նոր ֆինանսական պարտավորության ճանաչում: Նմանապես, գոյություն ունեցող ֆինանսական պարտավորության կամ դրա մի մասի պայմանների նշանակալի վերափոխումը (անկախ այն բանից, արդյոք այն վերագրելի է փոխառուի ֆինանսական դժվարություններին) պետք է հաշվառվի որպես սկզբնական ֆինանսական պարտավորության մարում և նոր ֆինանսական պարտավորության ճանաչում:

Մարված կամ այլ կողմի փոխանցված ֆինանսական պարտավորության (կամ ֆինանսական պարտավորության մի մասի) հաշվեկշռային արժեքի և վճարված հատուցման (ներառյալ փոխանցված ցանկացած ոչ դրամական ակտիվները կամ ստանձնած պարտավորությունները) միջև տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Հետագա չափումը

Սկզբնական ճանաչումից հետո տրամադրված և ստացված փոխառությունները, ավանդները, դեբիտորական և կրեդիտորական պարտքերը չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունքային տոկոսադրույքի մեթոդը: Կարճաժամկետ դեբիտորական և կրեդիտորական պարտքերը սովորաբար չափվում են անվանական գումարով: Ցպահանջ պարտավորությունները չափվում են այն գումարով, որով ենթակա են մարման պահանջը ներկայացվելու դեպքում:

«Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվներն ու ֆինանսական պարտավորությունների իրական արժեքի փոփոխություններից օգուտը կամ կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Հիմնադրամ այլ կազմակերպությունների բաժնային գործիքներում (բաժնետոմսերում) ներդրումներ չունի:

Պահուստներ

Պահուստը ճանաչվում է, երբ Հիմնադրամն ունի ներկա պարտականություն (իրավական կամ կառուցողական)՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, և պարտականության գումարը հնարավոր է արժանահավատորեն գնահատել: Եթե ժամանակի մեջ դրամի արժեքի ազդեցությունն էական է, ապա պահուստի գումարն իրենից ներկայացնում է այն

ծախսումների ներկա արժեքը, որոնք, ըստ ակնկալության, կպահանջվեն այդ պարտականությունը մարելու համար:

Ջեդչման դրույքն այն դրույքն է՝ առանց հաշվի առնելու հարկման ազդեցությունը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի և այդ պարտավորությանը հատուկ ռիսկերի ընթացիկ շուկայական գնահատումները: Ջեդչման դրույքը չի արտացոլի այն ռիսկերը, որոնց գծով դրամական միջոցների ապագա հոսքերի գնահատումներն ճշգրտվել են:

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ պահուստները վերանայվում են և ճշգրտվում են՝ ընթացիկ լավագույն գնահատականն արտացոլելու համար: Եթե այլևս հավանական չէ, որ պարտավորությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, ապա պահուստը հակադարձվում է: Պահուստն օգտագործվում է միայն այն ծախսումների դիմաց, որոնց գծով այդ պահուստը սկզբնապես ճանաչվել էր:

Աշխատակիցների հատուցումներ

Աշխատակիցների հատուցումները ներառում են՝

- աշխատավարձը,
- կարճաժամկետ փոխհատուցելի բացակայությունները, ինչպիսիք են վճարովի տարեկան արձակուրդը և ժամանակավոր անաշխատունակության նպաստը,
- պարգևավճարները:

Աշխատակիցների հատուցումների այն գումարը, որն ակնկալվում է վճարել հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում աշխատակիցներից ստացված ծառայության դիմաց, ճանաչվում է՝ ա) որպես պարտավորություն (հաշվեգրված ծախս)՝ արդեն վճարված գումարները հանելուց հետո, և բ) որպես ծախս, բացառությամբ, երբ որևէ ստանդարտով պահանջվում կամ թույլատրվում է այդ հատուցումների ներառումը որևէ ակտիվի ինքնարժեքի (սկզբնական արժեքի) մեջ: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների գումարը, ապա Հիմնադրամն այդ գերազանցումը ճանաչում է որպես ակտիվ (կանխավճարված ծախս)՝ այնքանով, որքանով այդ կանխավճարը կհանգեցնի, օրինակ, ապագա վճարումների նվազման կամ դրամական միջոցների վերադարձի:

Հիմնադրամն աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով ակնկալվող ծախսումները՝ կուտակվող փոխհատուցելի բացակայությունների ձևով (ինչպիսին է վճարովի ամենամյա արձակուրդը) ճանաչում է, երբ աշխատակիցները մատուցում են ծառայություն, որն ավելացնում է ապագա փոխհատուցելի բացակայությունների նրանց իրավունքը: Կուտակվող փոխհատուցելի բացակայությունների գծով ակնկալվող ծախսումները չափվում են այն լրացուցիչ գումարով, որը Հիմնադրամն ակնկալում է վճարել որպես հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ կուտակված չօգտագործված իրավունքների արդյունք: Հիմնադրամը պարգևավճարների գծով ակնկալվող ծախսումները ճանաչում է, երբ՝ ա) այն ունի այդպիսի վճարումներ կատարելու ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք և բ) պարտականությունը կարող է արժանահավատորեն գնահատվել: Ներկա պարտականություն գոյություն ունի այն և միայն այն դեպքում, երբ Հիմնադրամը պարտականության կատարումից խուսափելու որևէ իրատեսական հնարավորություն չունի:

4 ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

	Մերենա սարքավորումներ	Այլ	(հազար դրամ) Ընդամենը
<i>Սկզբնական արժեք</i>			
Առ 1 հունվարի 2021թ	1,332	721	2,053
Ձեռքբերումներ	13	1,067	1,080
Առ 31 դեկտեմբեր 2021թ	1,345	1,788	3,133
Ձեռքբերումներ	-	3,365	3,365
Առ 31 դեկտեմբեր 2022թ	1,345	5,153	6,498
<i>Կուտակված մաշվածություն</i>			
Առ 1 հունվարի 2021թ	1,329	176	1,505
Տարվա մաշվածություն	5	371	376
Առ 31 դեկտեմբեր 2021թ	1,334	547	1,881
Տարվա մաշվածություն	8	359	367
Առ 31 դեկտեմբեր 2022թ	1,342	906	2,248
<i>Հաշվեկշռային արժեք</i>			
Առ 31 դեկտեմբեր 2021թ	11	1,241	1,252
Առ 31 դեկտեմբեր 2022թ	3	4,247	4,250

Բանկային ավանդներ

	Արժույթ	Մարման ժամկետ	Դրույթ (%)	2022 AMD' 000	2021 AMD' 000
Դեպոզիտներ	ՀՀԴ	2023	7.45%	12,047	-
ՀՀ առևտրային բանկերում					
Դեպոզիտներ	ՀՀԴ	2023	6.25%	10,034	-
ՀՀ առևտրային բանկերում					
Դեպոզիտներ	ՀՀԴ	2023	6.45%	15,066	-
ՀՀ առևտրային բանկերում					
Դեպոզիտներ	ԱՄԴ	2023	1%	19,691	-
ՀՀ առևտրային բանկերում					
Դեպոզիտներ	ՀՀԴ	2023	7.25%	10,040	-
ՀՀ առևտրային բանկերում					
Դեպոզիտներ	ՀՀԴ	2023	7.25%	20,016	-
ՀՀ առևտրային բանկերում					
Դեպոզիտներ	ՀՀԴ	2023	7.25%	15,012	-
ՀՀ առևտրային բանկերում					
Դեպոզիտներ	ԱՄԴ	2023	2.5%	23,676	-
ՀՀ առևտրային բանկերում					
Դեպոզիտներ	ՀՀԴ	2023	7.45%	20,004	-
ՀՀ առևտրային բանկերում					
Դեպոզիտներ	ՀՀԴ	2023	7.25%	20,012	-
ՀՀ առևտրային բանկերում					
Դեպոզիտներ	ՀՀԴ	2023	7.45%	20,339	-
ՀՀ առևտրային բանկերում					
Դեպոզիտներ	ՀՀԴ	2023	6.25%	20,075	-
ՀՀ առևտրային բանկերում					
Դեպոզիտներ	ԱՄԴ	2023	2%	19,706	-
ՀՀ առևտրային բանկերում					
Դեպոզիտներ ՀՀ առևտրային բանկերում	ՀՀԴ	2023	7.45%	45,294	-
Դեպոզիտներ ՀՀ առևտրային բանկերում	ԱՄԴ	2023	2%	23,648	-
Դեպոզիտներ	ՀՀԴ	2023	7.25%	10,022	-
ՀՀ առևտրային բանկերում					
Դեպոզիտներ	ՀՀԴ	2023	7.45%	50,561	-
ՀՀ առևտրային բանկերում					
Դեպոզիտներ	ՀՀԴ	2023	6.45%	15,098	-
ՀՀ առևտրային բանկերում					
Դեպոզիտներ	ՀՀԴ	2023	6.25%	50,188	-
ՀՀ առևտրային բանկերում					
Դեպոզիտներ	ՀՀԴ	2022	6.45%	-	176,162
ՀՀ առևտրային բանկերում					
Դեպոզիտներ	ՀՀԴ	2022	6.25%	-	65,080
ՀՀ առևտրային բանկերում					
Դեպոզիտներ	ՀՀԴ	2022	6.65%	-	15,098
ՀՀ առևտրային բանկերում					
				420,529	256,340

5 ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ և ԴՐԱՆՑ ՀԱՄԱՐԺԵՔՆԵՐ

Դրամական հոսքերի հաշվետվությունում ներկայացված դրամական միջոցները և դրա համարժեքները ներառում է՝

	(հազար դրամ)	
	2022թ.	2021թ.
Բանկային հաշիվներ՝ ՀՀ դրամով	6,761	10,151
Բանկային հաշիվներ՝ արտարժույթով	4,923	36,512
	11,684	46,663

6 ԱԿՏԻՎՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՇՆՈՐՀՆԵՐ

	(հազար դրամ)	
	31.12.2022թ.	31.12.2021թ.
Մնացորդը հունվարի 1-ին	1,252	548
Շնորհների վերադասակարգում	3,365	1,080
Ավելացում	3,513	-
Տարվա ընթացքում շահույթում կամ վնասում որպես եկամուտ ճանաչված	(3,880)	(376)
Մնացորդը դեկտեմբերի 31-ին	4,250	1,252

7 Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

	(հազար դրամ)	
	31.12.2022թ.	31.12.2021թ.
Առևտրային պարտքերի գծով	35,691	19,858
Հիմնական միջոցների գծով	1,292	-
Պարտքեր ֆինանսական աջակցությունների գծով	3,234	1,460
Հարկերի և այլ պարտադիր վճարների գծով	1,269	1,160
Զօգտագործված արձակուրային պահուստ	2,871	2,910
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր աշխատավարձի գծով	42	43
	44,399	25,431

8 Եկամուտներին վերաբերող շնորհներ

	(հազար դրամ)	
	31.12.2022թ.	31.12.2021թ.
Մնացորդը հունվարի 1-ին	272,806	197,133
Շնորհների ստացում	441,434	381,360
Վերադասակարգում ակտիվներին վերաբերող շնորհի	(3,365)	(1,080)
Տարվա ընթացքում շահույթում կամ վնասում որպես եկամուտ ճանաչված	(333,503)	(304,587)
Մնացորդը դեկտեմբերի 31-ին	377,372	272,806

9 Շնորհից եկամուտներ

	(հազար դրամ)	
	2022թ.	2021թ.
Եկամուտներին վերաբերող շնորհներից	333,503	304,588
Ակտիվներին վերաբերող շնորհներից	3,880	376
	337,383	304,964

10 Ծրագրային ծախսեր շահառուների գծով

	(հազար դրամ)	
	2022թ.	2021թ.
Քաղցկեղով հիվանդների համար բուժօգնության ապահովում	195,792	128,892
Դեղորայքի գծով	69,002	71,451
Սննդի և նվերների գծով	17,798	17,726
Պալիատիվ բաժանմունքի վերանորոգման աշխատանքներ	-	6,514
	282,592	224,583

11 ԿԱՐԵՎՈՐ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐ ԵՎ ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են պատմական փորձի, ինչպես նաև այլ ցուցանիշների վրա, ներառյալ ապագա ակնկալվող իրադարձությունները, որոնք տվյալ հանգամանքներում համարվում են ընդունելի:

11.1 Կարևոր հաշվապահական գնահատումներ

Հիմնադրամը իրականացնում է ապագային վերաբերող գնահատումներ և ենթադրություններ: Այդ հաշվապահական գնահատականները կարող են չհամապատասխանել իրական արդյունքներին: Ստորև ներկայացված են այն գնահատումներն ու ենթադրությունները, որոնց գծով առկա է ռիսկ, որ հաջորդ ֆինանսական տարում ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները կենթարկվեն էական ճշգրտումների:

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետներ

Ղեկավարությունը կատարել է հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետների գնահատում: Ղեկավարության համոզմամբ գնահատված հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետները էականորեն չեն տարբերվում այդ ակտիվների տնտեսական կյանքից: Եթե հիմնական միջոցների փաստացի օգտակար ծառայության ժամկետները տարբերվեն գնահատումներից, ապա ֆինանսական հաշվետվությունները կարող են էականորեն տարբերվել:

12 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ

12.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ

Ֆինանսական ակտիվի, ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 3-ում:

12.2 Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված մնացորդները վերաբերում են ակտիվների և պարտավորությունների հետևյալ կատեգորիաներին.

Ֆինանսական ակտիվներ

	2022թ.	(հազար դրամ) 2021թ.
Բանկային ավանդներ	420,529	256,341
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	11,684	46,663
	<u>432,213</u>	<u>303,004</u>

Ֆինանսական պարտավորություններ

	2022թ.	(հազար դրամ) 2021թ.
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	35,691	19,858
	<u>35,691</u>	<u>19,858</u>

13 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ֆինանսական գործիքների հետ կապված՝ Հիմնադրամը ենթարկվում է զանազան ռիսկերի: Այս ռիսկերն են շուկայական ռիսկը, պարտքային ռիսկը և իրացվելիության ռիսկը:

Հիմնադրամը ներգրավված չէ սպեկուլյատիվ նպատակներով իրականացվող ֆինանսական ակտիվների ակտիվ առքուվաճառքի գործարքներում, ինչպես նաև չի թողարկում օպցիոններ: Առավել էական ֆինանսական ռիսկերը, որոնց Հիմնադրամը կարող է ենթարկվել, նկարագրված են ստորև:

Ֆինանսական ռիսկի գործոններ

ա) Շուկայական ռիսկ

Ֆինանսական գործիքների օգտագործման ընթացքում Հիմնադրամը ենթարկվում է շուկայական ռիսկի, հատկապես՝ արտարժույթային ռիսկի, որը բխում է գործառնական գործունեությունից:

Արտարժույթային ռիսկ

Հիմնադրամն իրականացնում է արտարժույթով արտահայտված գործարքներ, հետևաբար առաջացնում է արտարժույթի փոխարժեքի տատանումներին ենթարկվածություններ: Արտարժույթային ռիսկին ենթարկվածությունները Հիմնադրամը չի կառավարում:

բ) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը ֆինանսական վնասների ռիսկ է՝ պայմանավորված հաճախորդի կամ ֆինանսական գործիքի կողմերի պայմանագրային պարտականությունների չկատարմամբ: Հիմնադրամը ենթարկվում է պարտքային ռիսկի, որը հիմնականում առաջանում է բանկերում պահվող դրամական միջոցներից:

գ) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը այն ռիսկն է, որ Հիմնադրամն ի վիճակի չի լինի մարել իր պարտավորվածությունները:

Հիմնադրամը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ դրամարկղում և բանկային հաշիվներում պահելով բավարար միջոցներ, ինչպես նաև պահելով բարձր իրացվելիություն ունեցող ակտիվներ՝ գործառնական պարտավորությունները ժամանակին մարելու նպատակով:

Հետևյալ աղյուսակում ներկայացված է Հիմնադրամի ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորությունների գծով պայմանագրային մնացյալ մարման ժամկետները:

Աղյուսակը պատրաստված է ֆինանսական պարտավորությունների չգեղջված դրամական միջոցների հոսքերի հիման վրա՝ հաշվի առնելով ամենավաղ ամսաթիվը, երբ Հիմնադրամը ստիպված կլինի մարել այդ պարտավորությունները: Աղյուսակը ներառում է տոկոսների և մայր գումարի գծով դրամական միջոցների հոսքերը:

	2022թ.	(հազար դրամ) 2021թ.
Մինչև 1 ամիս	35,691	19,858
	35,691	19,858

Հիմնադրամն իրացվելիության ռիսկի գնահատման և կառավարման ժամանակ հաշվի է առնում ֆինանսական ակտիվներից ակնկալվող դրամային հոսքերը, մասնավորապես՝ դրամական միջոցները և առևտրային դեբիտորական պարտքերը: Հիմնադրամի դրամական միջոցները և առևտրային դեբիտորական պարտքերն գերազանցում են անհրաժեշտ դրամական արտահոսքերը: Առևտրային և այլ դեբիտորական պարտքերից դրամական հոսքերը պայմանագրով ենթակա են ստացման մեկ ամսվա ընթացքում:

14 ՊԱՅՄԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

14.1 Գործարար միջավայր

Հայաստանում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները շարունակական բնույթ են կրում: Որպես զարգացող շուկա՝ Հայաստանում բացակայում են կատարյալ գործարար միջավայր և համապատասխան ենթակառուցվածքներ, որոնք սովորաբար գոյություն ունեն ազատ շուկայական տնտեսություն ունեցող երկրներում:

Բացի դրանից, տնտեսական պայմանները շարունակում են սահմանափակել գործառնությունների ծավալները ֆինանսական շուկաներում, և ֆինանսական գործիքների իրական արժեքները կարող են չհամապատասխանել իրականացված գործարքներին: Հետագա տնտեսական զարգացման հիմնական խոչընդոտը տնտեսական և ինստիտուցիոնալ զարգացման ցածր մակարդակն է՝ զուգակցված տարածաշրջանային անկայունությամբ և կենտրոնացված տնտեսական հենքով, ինչպես նաև միջազգային տնտեսական ճգնաժամը:

Հայաստանի Հանրապետության հետ համագործակցող երկրների տնտեսությունների վիճակի վատթարացումը հանգեցրել է արտերկրից դրամային փոխանցումների կրճատմանը, ինչից Հայաստանի տնտեսությունը գտնվում է մեծ կախման մեջ: Հանքահումքային ապրանքների միջազգային գների հետագա անկումը, անորոշությունները՝ պայմանավորված ուղղակի կապիտալ ներդրումների ներգրավման հնարավորություններով, գնաճը, կարող են հանգեցնել Հայաստանի տնտեսության, ինչպես նաև Հիմնադրամի վիճակի վատթարացման: Այնուամենայնիվ, քանի դեռ այս անորոշություններում առկա դատողություններն ու ենթադրությունները շատ են, ղեկավարությունը չի կարող վստահաբար հաշվարկել, թե ինչ չափով դրանք կարող են ազդեցություն ունենալ Հիմնադրամի ակտիվների և պարտավորությունների մնացորդային արժեքի վրա:

Հիմնադրամի ղեկավարությունը գտնում է, որ ընթացիկ պայմաններում իրականացվում են համապատասխան միջոցառումներ Հիմնադրամի տնտեսական կայունությունն ապահովելու նպատակով:

14.2 Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, Հայաստանում դեռ չեն կիրառվում: Հիմնադրամը չունի ամբողջական ապահովագրական ծածկույթ իր ակտիվների և գործունեության ընդհատման համար, չունի նաև Հիմնադրամի գույքի կամ գործառնությունների հետ կապված պատահարների հետևանքով գույքին կամ շրջակա միջավայրին հասցված վնասի գծով երրորդ կողմի նկատմամբ պարտավորությունների ապահովագրություն: Քանի դեռ Հիմնադրամը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Հիմնադրամի գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

14.3 Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը համեմատաբար նոր է՝ հաճախակի փոփոխվող օրենսդրությամբ, որը հաճախ մեկնաբանություններ է պահանջում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են տուգանքներ և տույժեր առաջադրել:

Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և դրանց ազդեցությունը կարող է զգալի լինել:

15 ԿԱՊԱԿՑՎԱԾ ԿՈՂՄԵՐ

Ինչպես նկարագրված է ծանոթագրություն 1-ում, Հիմնադրամի հիմնադիրն է Հայաստանի Հանրապետությունը՝ ի դեմս Կառավարության, ուստի բոլոր պետական մարմինները և գործակալությունները հանդիսանում են Հիմնադրամի կապակցված կողմեր:

Հիմնադրամի կապակցված կողմերը ներառում են նաև հիմնական ղեկավար անձնակազմը և հոգաբարձուների խորհուրդը:

15.1 Գործարքներ կապակցված կողմերի հետ

Հաշվետու տարվա ընթացքում Հիմնադրամի և իր կապակցված կողմերի միջև իրականացվել են հետևյալ գործարքները, և հաշվետու ամսաթվի դրությամբ մնացորդները հետևյալն են:

	2022թ.	(հազար դրամ) 2021թ.
Հիմնական ղեկավար անձնակազմ	13,345	11,737
Աշխատավարձ և այլ հատուցումներ	13,345	11,737